



ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ԾԱՐԴ. ՏԱՐԻ ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 43

20 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1907

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

Նեղ Հագուս

Մայրական Սեր

Քառմեն Սիլվա

Ջլասը [Վ. Խալսի]

Անմասչիին

MICHEL PROVENS-ի

Կորին Վարդապետի մեկ

Յօդուածին Շուրջը

Գաւառացիին Նամակը Խմբագիրին

Սոխակին Երգը

Ստացուած Գիրքեր

Մեր Կեանքին

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

Յ. ԱԼՓԻԱՐ

ԲԻԷՆ ԼՕԹԻ

ՄԻՀՐԱՆ ՈՒՂՈՒՐԼԵԱՆ

Ա. Թ.

ՎԷՆԻՍՍ

Ա. ՍՕԼԱԽԵԱՆ

ՖՐԱՆՍՈՒԱ ԳՕՓԷ

Կ. ՊՈԼԻՍ

ՅՊՍ.Գ.Բ. ՃԻՀԱՆ

1907.

10 ՈՍԿԻ ՊԱՐԳԵՒՈՎ


ՄԵՐ ՄՐՅՈՒՄԻՆ ԱՐԴԻՆՔԸ

Մեր առաջարկին պատասխանելով, քառակուսիներու մէջէն անցնելու մեր Մրցումին [Մասիս թիւ 34] ստացանք ժամանակին չափ մը պատասխաններ, Պոլիսէն թէ զաւառէն, որոնց միակ յաջողը, ժամանակին, հասցուցինք Փրանսերէն այն թերթին, որ 10 ոսկի (200 ֆրանք) պարգեւ կը խոստանար: Ուրախ ենք ու հպարտութիւնով կը ծանուցանենք թէ՛ այդ պարգեւը վիճակած է ո՛չ միայն Մասիսի շրկուած պատասխանի մը, այլ ամբողջ եւրոպացի մրցակիցներու մէջէն միակ Հայոռ մը, Տ. Արտաւազդ Վարդ. Գալէնտէրեանի, որ զբօսանքի համար՝ քմահաճոյքը ունեցած էր Մրցումով զբաղելու և զայն ճիշդ լուծելով մեզի զրկելու: Ֆրանսերէն թերթը, իր 21 հոկտ. ի թիւին մէջ կը ծանուցանէ մրցումին արդիւնքը, ուր 477 մրցողներու մէջ միակ յաջողողը կը հռչակուի Հայ Վարդապետը, յաջողութիւն մը, զոր խմբագրութիւնը ինք ալ կը շնորհաւորէ: Նոյն թերթը մեզի զրկած է 200 ֆրանքնոց չէք մը, զոր կը խնդրենք Տ. Արտաւազդ Վարդապետէն ստանալ մեզմէ և զանձել: Բարի վայելում մաղթելով, այս ազւորիկ զումարին համար, կը շնորհաւորենք Վարդապետը՝ իր եզակեան ու անակնկալ յաջողութեան համար: Աւելցնենք նաեւ թէ Վարդապետը, մեր խոստումին համեմատ, մեզմէ ալ կը ստանայ ժամացոյցի պարգեւը:

Ահաւասիկ լուծումը. —

Քառակուսին հատուած-հատուած անանկ մը ծալլել՝ որ մէկ անկիւնի Ա. խորշը ինչայ հակընդդէմ անկիւնի Ա. խորշին վրայ. երբ ասեղ մը անցընենք մէկ կողմէն, անցած կ'ըլլանք լոյր խորշերուն մէջէն, առաջարկին բոլոր պայմաններուն համաձայն:

Թուղթի մը վրայ մեծ խորշերով գծել պատկերը խորշիկաւոր քառանկիւնին. նախ վերի գլուխի խորշիկներուն շարքը՝ վեց հատ՝ դէպի ներս ծալլել. յետոյ՝ դէպի դուրս ծալլել ձախ կողմի շարքը՝ այս անգամ հինգ մնացած. այդ վիճակին մէջ դէպի ներս ծալլել նորէն վերի գլուխի շարքը՝ հինգ խորշիկ. երկայնքն ի վար ախտահօն ծալլել մնացած շարքերը, երես բերելով ձախ կողմի վերի խորշիկին արտաքին կողմը (Ա.). իր վրայ ախտահօն ծալլել նորէն՝ վրան բերելով Ա. կողմը. ծալքը կ'աւարտի ու ապստով դէմ դէմ կը մնան երկու հակընդդէմ Ա. կողմերը: Մնացածը յայտնի է:



ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳԻՐ

ՆՆՈՎՈՒՄ ԱՐՄԱՆ

ԾԱԲ. ՏԱՐԻ ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 43

20 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1907

ՆԵՂ ԶԳԵՄՏ

Մեր աղք. հաղուագիւտ բարձրագոյն կրթական հաստատութիւններէն մէկուն՝ Կեդրոնական Վարժարանի Ուսուցչական Մարմինը անակնունելի կարգադրութեան մը առջև կը գտնուի, որուն զիւարդ որչափ նոր՝ նոյնչափ աւանդական խրատելակ մըն է մեր բարձրուն մէջ, որ ահաւոր պատուհասի մը դժնէ տեսիլքով կը տատանի կրթական պաշտօնեաներու գլխուն վրայ։ Խնամակալութիւնը, տարուան սկիզբը, նեղ զգալով Վարժարանին պիւտոժէն, այդ փորձութենէն փրկուելու միջոցը կը գտնէ ուսուցիչներու ամսականները զեղչելուն մէջ, ի՞նչ համեմատութիւնով որ կրնայ։

Ու կ'իրագործէ ծրագիրը, ուսուցիչներու ամսականները կտրտելով ուղուա՛ծին պէս։ Ուսուցչական Մարմինը, լուռ հասկացողութեան մը եկած, կը համակերպի կարգադրութեան, նկատելով որ՝ զրկանքը ընդհանուր է, և տնօրէնութեան այդ համայնական բնոյթին մէջ գտնելով միտիտարութիւնը, — ինչպէս ամէն արկածեալ, իրեն հետ իր ընկերի՛ն ալ հասած չարիքին մէջ կը գտնէ իր ցաւին սփոփանքը։

Մտածումը յանդուգն է ու նորօրինակ, եթէ ո՛չ ուրիշի, գոնէ Կեդրոնականի համար, որ իբր մեր երկրորդական կարեւոր վարժարաններէն մէկը, կ'սպասուի որ զերծ ըլլայ թաղային վարժարաններու ճակատագիրին յատուկ անխորհուրդ խաթալումներէ, ներկայանալով քիչ-շատ եւրոպական վարչական գրութեան մը մէջ: Եւ ինչո՞ւ չը փնտռել եւրոպականացումի՞ բարերար օրինակները մե՛ր ալ մէջ, երբ բացօթյա է թէ՛ օտար ո՛ր եւ է հաստատութիւն՝ իր պիւտոժէն հաւասարակշռելու հնարքը չի պիտի տեսնէր ուսուցիչներու ամսականը զեղչելու մոլար գիւտին մէջ: Կեդրոնականի Խնամակալութեան—որուն արդիւնաժան գործունէութիւնը արժանի է ամէն ծափի—այս կարգադրութիւնը զարմացուցիչ է և հակասութեան մէջ կը ձգէ զինքը: Կամ ա՛ն է որ այդ մարդիկը արժանի չ'էին այն ամսաթուղակին՝ զոր մինչեւ հիմա կ'ստանային, կամ իրական, ճշմարիտ զրկանք մը կ'ըլլայ իրենց՝ հիմա՝ ամսականնուն զեղչուելովը: Թող տրամաբանեն: Եթէ արժանի չ'էին՝ ինչո՞ւ այսչափ տարիներ աւելորդ դրամ մըն է տրուել, ֆլատելով Խնամակալութեան Մտուկը, որ այդպէսով չնորհքով գումար մը տուած կ'ըլլայ, ամբողջ տարիներ: Եթէ արժանի էին և իրենց առած վարձքը իրարժան փոխարինութիւնն է թափուած վաստակին ու ջանքերուն, ի՞նչ տրամաբանութիւնով և ի՞նչ արդարացումով կը կապտեն անոնց իրաւունքը, իրենց վարձքէն մա՛ս մը կտրելով և ճշմարիտ, ակնեղբեւ զրկանքի մը ենթարկելով վաստակը՝ աշխատաւորներու՝ որոնց իրաւունքը պէ՛տք է տնտեսաբար ըլլայ: Պայմանադրական ձեւակերպութիւններով պարտկուած ճշմարիտ զրկանք չ'է կըթական պաշտօնեաներու արդար իրաւունքին եղած այդ յապաւումը, լրիկ մնչիկ խորուած բաժին մը անոնց քսակէն, անոնց ուտելիք հացէն, որ այնչափ սուղ քրտինքներով է վաստկուած:

Մտաւորական Դործին աշխատաւորներու եղած այս անիրաւ զրկանքին յոռի օրինակը գոնէ Կեդրոնականը պէտք չ'էր տար, վհատեցուցիչ օրինակը այդ զգուելի Մեթոտին, որ այնչափ գէշ կ'ազդէ: Այդ ապիկար Մեթոտը թաղային վարժարաններու վարչութեանը միայն կը վայլէ, և թող անոնց միայն վերապահուի այդ մենաշնորհը, այնչափ տխրահուշակ կամայականութիւններով

շահագործուած արդէն : Կեդրոնականը՝ իր Երկրորդական Վարժարանի բարձրութեանը մէջ՝ պէտք չէր իրեն վայելցնել կրթական մշակներու հացը կտրելու , աժան աշխատցնելու , անօթի ապրեցնելու այդ ստրկացուցիչ դրութիւնը , կրթական այն կամարներուն տակ , ուր մանկավարժութիւնն Է կ'ուսուցուի և ուր ուսուցչական պաշտօնին , կոչումին վեհութիւնը կը հռչակուի :

Անօթի շունչով ուսուցիչ աշխատցնելու այս օրինակը Կեդրոնականէն :

Ի՞նչ սիրտ կ'սպասեն այն ատեն ուսուցիչէն՝ որ դասախօսած ատենն՝ միտքին մէջ ունի հոգը իր անբաւական ու խորուած ամսականին , որ ջլատիչ վհատութեան մը թոյնը կը կաթեցնէ հոգիին մէջ և աւելի շունչ մը սպառելու իր եռանդը կ'սպաննէ : Խնամակալութեան այս արարքը Ուսուցչութեան Կոչումին ու Յարգին երեսին արձակուած բիրտ նախատինք մը և տխուր հերքում մըն է , որ իր կշիռը ունի : Ատիկա ընթացքն է այն վարպետորդի գերձակին , որ կերպասի ոչինչ կտորէ մը խոշոր զգեստ մը հանելու համար , չորս կողմերէն կը մկրատէ ու կը նեղցնէ դայն , ա'յնչափ որ՝ մէջտեղ ելած զգեստին թեւերը , սրունքերը , կռնակը նեղ կուգան տէրոջը , և հագնողը կ'ամչնայ ծիծաղելի խամսճիկի իր կերպարանքէն :


Այդ վատթար Սկզբունքը և մոլար Մեթօտը պէ՛տք է միտքէ վանել :

Ի՞նչ ընեն , — պիտի հարցուի : Օ՛հ , բա՛ն մը , բա՛ն մը վերջապէս , որ ուսուցիչներու ամսականը կտրե՛լ չ'ըլլայ :

Չորս մոմ պակաս թող վառեն , Կեդրոնականը հովանաւորող եկեղեցիին մէջ , կանթեղ մը իւղ պակաս թող սպառեն , անպէտ ու չլացուցիչ պերճանքներէ բան մը պակաս թող ընեն մեծածախս հանդիսութիւններէն , բայց թող չը զեղչեն , չը մկրատեն ամսականը ուսուցիչներուն , թող չը պակսեցնեն անոնց հոգիին ու սիրտին ուժը վառ պահող կանթեղին իւղը , մխացող Լուսաւորութեան տաճարին սրբազան սեղաններուն առջեւ :

ՆՆՈՎՔ ԱՐՄԷՆ

Ք Ա Ռ Մ Է Ն Ս Ի Լ Վ Ա



Իմ թափառայած կեանքիս մէջ անգամ մը միայն պատահեցաւ որ կանգ առնեմ կախարչական զղեակի մը մէջ, պարիկի մը տունը: Երբ անտառներու մէջ շեփորին հեռաւոր ձայնը լսեմ, հոն անցուցած օրերուս ամենապզտիկ յիշատակները կը վերակենդանանան մէջս, որովհետեւ պարիկին զղեակը շինուած էր խոր անտառի մը մէջտեղը, ուր շարունակ կը լսուէին թաւ ձայները շեփորներու, որոնք հեռուէ-հեռու իրարու կը պատասխանէին: Այդ տարօրինակ անձանքի ձայները իրենց յատուկ մեղմաղձութիւն մը ունէին, մեր հոն չնչած օդին, սարերու լուռ, կենդանի և մաքուր օդին հնչականութեան մէջ . . . Իմ կազմուածքս անանկ մըն է որ՝ երաժշտութիւնը ինծի համար կատարեալ յուշադարձոյց զօրութիւն մը ունի: Նուագներու կտորներ, ժամանակ անցնելէ ետքը, դեռ կրնան ինծի յիշեցնել, որ և է պատկերէ աւելի՝ աշխարհիս մէկ քանի տեղերը և մէկ քանի դէմքերը, որոնք իմ կեանքիս մէջ տեղ մը ունեցած ըլլան: Եւ հիմա, երբ հեռուէն կը լսեմ շեփորներու հնչիւնը, աչքիս առջև կ'ու գայ ան յանկարծ, անանկ յատակ որ՝ կարծես դեռ հոն գտնուէի, արքայական դարդասենեակ մը, — որովհետեւ այն պարիկը որուն վրայ կը խօսիմ՝ թաղուհի մըն է միանգամայն, — որուն դէմքական մեծ պատուհանները՝ նախնական անտառներու պէս խիտ ու անհամար կանանչ եղեւիներու վրայ կը նային: Զարդասենեակը, թանկագին առարկաներով խճողուած, քիչ մը մութ շքեղութիւն մը ունի, աննկարագրելի գոյներով, չիկագոյնի զարնող ասկնաթոյր կաներ, մթնցած ոսկեղէն զարդեր, առկայծ կրակի երանգներով, պզտիկ ներքին պատշգամներու նմանող ճեմելիքներ կան հոն և աշտարակիկներու մէջ խորհրդաւոր խորշեր ծածկող մեծ ու թանձր օթոցներ: Եւ պարիկը կ'երեւայ ինծի նորէն հոն, ճերմակներ հագած, երկայն քօղ մը վրան ձգած, պատկերակալի մը առջև նստած և թեթեւ ու դիւրաշարժ վրձինով մը մագաղաթի մը վրայ կը նկարէ հնաճաշակ զմայլելի երգներանգութիւններ, որոնց մէջ ոսկեգոյնը կը տիրապետէ, ինչպէս բիւզանդեան արուեստին մէջ: Թաղուհիին հին մէկ աշխատութիւնն է ան՝ զոր երեք տարիէ իվեր սկսած է, անգին ժամագիրք մը, զոր կը նկարագարէ և զոր մտադիր է նուիրել մայր եկեղեցիի մը:

Պարիկին ճերմակ զգեստները արեւելեան ձևով շինուած են, արծաթահիւս ու արծաթաթել: Բայց այն դէմքը որ քօղին թափանցիկ ծաղերուն մէջ կը չըջանակուի, չ'իմ գիտեր ինչ մը ունի ամպային ու անուշ, որ Հիւսիսի նրբացած ցեղերուն կը վերաբերի: Եւ սակայն, անոր ամբողջութեանը մէջ անանկ կատարեալ ներդաշնակութիւն մը

կը տիրէ՝ որ կարծես թէ այդ զգեստները պարզապէս զանոնք կրող պարիկին համար հնարուած են , այդ պարիկին համար՝ որ տեղ մը գրած է . — «Արդուղարդը անկարեւոր բան մը չ'է՛ : Ան գեղարուեստական կենդանի տառիկայ մը կ'ընէ քեզ , պայմանով որ՝ դուն ալ զարդարանի՛ր ըլլաս ինչ զարդարանի՛ս» :

Ինչ բռնեցով նկարագրեմ այդ թագուհիին դէմքը : Ինչ դժուար և փափուկ բան է ադ . կարծես թէ սովորական բացատրութիւնները , զորս մարդ կը դործածէ ուրիշի մը վրայ խօսած ատեն , անմիջապէս անպատկառ կ'ըլլան , անյնչափ յարգանք կ'ըզայ մարդ երբ անոր վրայ է խօսքը : Իր ժպիտին մէջ յաւիտենական երիտասարդութիւն մը կայ և իր այտերուն վրայ՝ որոնց վարդադոյն թաւելը անալլայելի է՝ կը փայլի ան՝ իր ճենապակիի պէս վճիտ , գեղեցիկ ակունքներուն մէջ : Բայց այն չքաղ մազերը՝ որոնք արծաթէ զանակներով ցանցնուած քօղին մէջէն կ'երևան , գրեթէ ճերմակ են : «Ճերմակ մազերը , ըսած է ինք իր Մսածռններուն մէջ , այն փրփուրներն են , որոնք փոթորիկէն ետքը ծովը կը ծածկեն» :

Եւ ինչպէս կարելի է բացատրել եղական հրապոյրը իր նայուածքին , իր դորշ , վճիտ աչքերուն , որոնք իր լայն ու մաքուր ճակատին տակ՝ քիչ մը ներս քաշուած ու ստուերի մէջ մնացած են , հրապոյր գերազոյն իմացականութեան , հրապոյր անյատակ խորութեան , խորհրդապոհ ու համակրելի մտատեսութեան , խոր տառապանքի և անհուն գթութեան : Մշտափոփոխ է այդ դէմքին արտայայտութիւնը , թէեւ ժպիտը գրեթէ անբաժան է անկէ : «Մեր դերին մաս կը կազմէ , ըսաւ օր մը ինծի , կուռքերու պէս միշտ ժպտիլը» : Բայց այդ ղշխոյի ժպիտը շատ մը այլազան երանգներ ունի . երբեմն յանկարծական թարմ զուարթութիւն մըն է , գրեթէ տղայական , բայց շատ անգամ համակերպող մեղամաղձութեան և երբեմն անսահման տրտմութեան ժպիտ մը : Այն վիշտերէն , որոնք այդ թագուհիին մազերը ճերմկեցուցած են , մէկը միայն գիտեմ , ան՝ զոր ամէնէն աւելի ես կրնամ հասկնալ և զոր կրնամ ըսել . արքայական ապարանքի մը մեծ պարտէզին մէջտեղը , իր հրամանով տարին զիս գերեզմանի մը առջև , ուր կը հանգչէր պղտիկ իշխանուհի մը , որ իրեն կը նմանէր , որ իր զխմազիծերը և գեղեցիկ լայն ճակատը ժառանգած էր : Գերեզմանին վրայ կարդացի Աւետարանին սա խօսքը . «Ինչո՞ւ կու լաք , մեռած չ'է՛ , այլ կը քնանայ» : Եւ իրաւ , պառկած պղտիկ արձանը կարծես կը քնանայ խաղաղիկ՝ իր մարմարէ պատմութեան մէջ : «Ինչո՞ւ կու լաք» : Սակայն պղտիկ քնացող աղջկան մայրը կու լայ տակաւին , դառնօրէն կու լայ իր մէկ հատիկ զաւակին վրայ : Եւ ահա իր խօսքերէն մէկը՝ որ շատ անգամ միտքս կու գայ , իրր թէ ձայն մը իմ ներսիդիս կրկնէր զայն մահագանգիւն զանգաղութիւնով մը . «Տուն մը ուր տղայ չը

կայ , զանգակ մըն է՝ որ թակաղ չունի . հնչիւնը՝ որ կը քնանայ հոն ,
թերեւս ըլլար շատ դեղեցիկ , եթէ լսն մը կարենար զայն արթնցնել :

*
* *

Օ՛հ , ինչպէս կը յիշեմ ամենապզտիկ վայրկեանները իսկ այն անուշ
խօսակցութիւններուն , զորս այդ մթին զարդասենեակին մէջ անյուշ
ցած եմ , այդ ուղիտակազգեստ թագուհիին հետ : Այս ծանօթագրու-
թիւններուն սկիզբը , ըսի թէ պարիկ մըն էր ան . տախտակի վրայ էր
ինծի համար՝ բարձրագոյն տեսակէ էակ մը ցուցնելու : Չէի կրնար ըսել
հրեշտակ մը , որովհետեւ այդ բառը ա՛յնչափ շատ գործածած են որ՝
հինցած ու ծաղրելի լսն մը ըրած են զայն : Եւ արդէն , ինծի կը թուի
թէ , այս պարիկ բառը , իմ հասկցած իմաստովս , շատ պատշաճ է այդ
կնոջ , որ երիտասարդ է իր դորչ մաղերովը , անհուն թաղծութիւնով
մը ժպտուն , Հիւսիսի աղջիկ եւ թագուհի , կարող ամէն լեզու խօսե-
լու և ամէնքն ալ երաժշտութեան փոխելու , միշտ մոգիչ , իր շուրջը
սիւսելով , շատ անգամ իր բարի ժպիտովը միայն , տեսակ մը բարերար
հրապոյր , որ կը կազդուրէ , որ կը զուարթացնէ , որ կը մխիթարէ . . .

Եւ աչքիս առջեւ կու գայ թագուհին , իր երկայն քօղով , — ալ
չեմ համարձակիր Պարիկ անուանել զայն , հիմա որ աւելի յստակօրէն
անոր ո՛վ ըլլալը ըսի : Իր պատկերակալին առջեւ է և կը խօսի ինծի ,
մինչդեռ հնաճաշակ դժագրութիւնները՝ որոնք կարծես իր մատներէն
կ'իլլին ընտանիքէն , ժամագիրքին մագաղաթին վրայ կ'որուակին :
Թագուհիին քով նստած են երկու-երեք մանկամարդ աղջիկներ , իր
Պատուակալ Օրիորդները , թխահեր աղջիկներ , որոնց արեւելեան հան-
դերձները տարօրինակ դոյներ ունին , ոսկեզօծ ու զանաւառոր : Կը կար-
դան կամ մտանքսի վրայ կ'ասեղնագործեն հին երանգներով մեծ ծա-
ղիկներ : Իրենց սեւ աչքերը ատեն-ատեն վեր կ'առնեն , երբ խօսակ-
ցութիւնը՝ զոր կը լսեն՝ զիրենք աւելի հետաքրքրէ : Այն տեղը՝ զոր
թագուհին ինծի կու տայ՝ սովորաբար՝ իր դիմացն է , պատուհանի մը
մօտ , ուր առանց անագի միակտուր հայելի մը՝ չըջակայ անտառին
վրայ նայող լայն լայնութիւն մը պատրաստը կու տայ : Պատճառը ա՛ն է
որ՝ արուեստագէտի նրբախոհութիւնով մը Ռումանիայ թագաւորը
անտառը վայրի , նախնական վիճակի մը մէջ ձգած է իր զգեսակին
պատերէն քսան քայլ հեռուն . իր ընտանիքեան յատկացուած սենեակ-
ներուն պատուհաններէն , հակայ եղեւիններ միօրին կը տեսնուին , ոտե-
րու տակեր , անտառի ներքին կողմեր և կամ ընդարձակ կանաչ հե-
ռատաններ , Կարպաթեան ծառախիտ սարեր , որոնք իրարու վրայ
յարկ-յարկ կը բարձրանան , զարմանալի կերպով մաքուր օդին մէջ :
Եւ այդ անտառը , զոր հոն մօտեց կ'զգաս , չքեղ զգեսակին մէջ կը
սիւսէ մոգութեան և խորհուրդի սպաւորտութիւն մը :

[Յարգով]

ՀԼՍՏԸ

Բ.

Երկյարկ տունը՝ ուր կը բնակէր Արսէն՝ ծերուկ հօրաքրոջ մը հետ, որը մնալէն ի վեր, ծնողքէն ժառանգած միակ կալուածն էր, պաշարուած դեղեցիկ ու հարուստ բուսականութեամբ լեցուն պարտէզով մը, որուն ծառերուն հոծ ստուերները, զանազան դունազեղ ծաղիկներու և լայնզոր տերեւներու բոյրը և տեսքը՝ իր դիւրագրգիռ ու մշտատանջ հոգիին համար ներշնչումի ու վաղանցիկ սիրտիանքի՝ ալ ազդիւրներ կը դառնային յաճախ։ Բոլոր թէ զրոյ մըն էր ինքը — և սանրխնանդալ տեսակէն։ Բայց կը գրէր՝ ինքզինքին համար միայն։ Որովհետեւ չէր հանդուրժեր արիւններուն հետաքրքրութեան անարկայ դառնալուն, իր գաղտնիքները և զգացումները ցոյցադրելով։ Ու յետոյ, հրապարակով գրել՝ չէ՞ մի որ քիչ մը ամէնուն ալ զրոտանքին — հոգ չէ թէ մտաւոր — անթարկուիլ կը նշանակէր։ Իր այս ըմբռնումին մէջ, հակառակ չափազանց անձնապահ կոստիւթիւն մը գոյութիւն ունենալուն, ճշմարտութեան երանգ մը կար սակայն և իր այս նկատումը կ'արդարանար մանաւանդ անոր համար որ, իր ծայրայեղ անկեղծութեանը մէջ կը վախճար յայտնելու «սէրեր և ատելութիւններ» որոնք անձնական մտերիմ դրոշմ մը կրելու կրնային ձգտիլ։ Եւ ահա ինչ որ զինքը աւելի՛ կը խորչեցնէր։ Ինչն անմիջապէս պահանջէր — որոնց մէջ ամէնէն աւելի իր դառնացած հոգին արբեցնող ու մխիթարող ժամանցն էր Սիրանուշին հետ անցումը, անոր հրեշտակային գէմքին մանկունակ ու անդիմադրելի հմայքով օժուն ժպիտները դիտելով և ունկնդրելով անոր միամիտ զուարթութեամբ բառերուն ոսկեղէն հնչումին, — իրեն անհրաժեշտ պէտքերէն մէկն էր դարձած նաեւ Արամին ներկայութիւնը, միակ ճշմարիտ բարեկամը զոր ունեցած ըլլար աշխարհի վրայ։ Ազնուականութեան կատարեալ տիպար մը՝ այս երիտասարդը, համակրելի, կենցաղադէտ և վերջին ծայր լըջամիտ, որ կանուխէն արդէն իրեն յարմար գիրք մը դրած էր իր պերճախօսութեամբ ու հմտութեամբ՝ Պոլսի իրաւարանական աշխարհին մէջ։ Իր դատական մէկ գործին առիթով, Արսէն, քիչ ատենի մէջ՝ ճանչցած էր երիտասարդ փաստաբանին մէջ այն կամքի կորովը, հաստատամտութիւնը և տոկուն նկարագիրը՝ որոնք մարդը կը շինեն և որոնց վրայ վստայած էր պարզապէս, այդ անաւելութիւնները իրմէ պակսելուն։ Այս դեղեցիկ յատկութիւններէն զատ, Արամին ուղղամտութիւնը, պարկեշտութիւնը և անկեղծօրէն խանդավառ սիրտը զինքը չափազանց յուզած էին։ Եւ շատ չանցած, բարեկամական լուրսանութիւններով մը յարած էր անոր։ Եթէ իրենց խառնուածքին, հոգեկան վիճակներուն տարբերութիւնը

առաջին վայրկեանէն իսկ աչքի կը զարնէր՝ շատ ցայտուն ըլլալուն , բայց իրենց աննենդ ու անշատէր նկատումները իրարու հանդէպ , եւ մտաւորական զարգացումի բարձրութեան հանգիստութիւնը՝ որով իրար անմիջապէս կը հասկնային , պատճառ եղած էին իրենց միջև անքակտելի բարեկամութեան մը հաստատումին : Արամէն կրած տպաւորութիւնը այնչափ ուժգին և անբաւարար էր եղած որ՝ անմիջապէս թուղթին յանձնած էր զայն . և հիմա պատուհանին առջեւ ուր վերջապէս գացեր էր նստիլ Արամէն , սենեակին մէջ ամուլ երթեւեկներէն յոգնած և իր բարեկամին սպասումին մէջ , երիտասարդ պաշտօնեան յուշատետրը բացած կը կարդար իր ա'յնչափ սիրած ու զոց ըրած հետեւեալ միամտորէն պարկեշտ տողերը . — « Ուրախ եմ այսօր , որովհետեւ ա'լ բարեկամ մը ունիմ . կրնամ անոր ցոյց տալ իմ երազային փափկութեամբ հոգիիս պատառատուն ծուէնները . փոթորկոտ ներաշխարհս անոր աչքին առջեւ կը պարզեմ , իր բովանդակ իղձերուն ու յոյզերուն երկինքովը և անկէ խորհուրդ մը կ'սպասեմ : Ինքզինքս կը կրկնեմ անոր մէջ , որովհետեւ անայլայլ վստահութիւն մը ունիմ անոր նկարագրերին վրայ : Ան իմ մօտս է , — շատ մօտը սիրտիս , — այդ նոր մարդը , այդ կրկնեւեղութիւն , անձնուէր ու անկեղծ ու շատ ալ բարի . իմ վիշտս անոր հետ կը բաժնեմ և անոր սիրտին անուշ գթութեան , անոր յուսատու բառերուն լայն ջերմութեան տակ անձկութիւններս կը միտին թեթեւալ . . » : « Որովհետեւ յաճախ բախտին քմահաճոյքը գլխի պտոյտներ կը տառճառէ մեզի և մեր նայուածքը հնդկական խռովքի մը արտաբերութեամբ կը մթագնի , ո՛վ պիտի մոռցնել տար թօշնուժը և անգութ համակերպութիւնը մարդուս յուսախար սիրտին . Հայրը սահմանափակ խորհրդատու մը կրնար ըլլալ , մայրը գորովասիրտ անկարող մը , եղբայրը յաճախ անտարբեր դիտող մը և քոյրը , օհ , բարի ու սիրուն թոթովող մը գթութեան և սփոփանքի մեծ խօսքերուն : Բայց բարեկամ մը . — ա՛խ , միայն անոր մեր թեւերը բացած պիտի փարէինք , արցունքոտ ժպիտ մը մեր շրթունքին վրայ և մեր հոգիին հրայրքը աչքերնուս մէջ , անոր երեսն ի վեր հօծելու վէպէսին հիանալի *J'ai besoin de pleurer sur le front d'un ami* » :

*
* *

Արամին անակնկալ հանդիպումը մխիթարական եղաւ Անմեղեանին համար : Ինք անոր մէջ գտած էր խրոխտ ու աննկուն բայց միեւնոյն ատեն ազնիւ հոգի մը , — ա'յնչափ տարբեր իրեննէն , — որուն անկաշկանդ , առօրե ու բարձրախիչ սրացումները իրեն մտածել կու տային : Ինչ որ գլխաւորաբար իրեն պակասած էր՝ կամքին ուժն էր , մզիլ ազդակը , որ շարժումի մէջ կը դնէ մեքենական դրութիւնը մարդկային մարմնին , և տշխատութեան , շարունակական անդուլ ջանքերու և

դէպի գործի կեանքի թաղձացուած , երազուած նպատակի մը հասնելու ձգտումնաւոր միջոցը կը դառնայ : Այս մեծ առաւելութիւնը որոշապէս կը տեսնէր իր բարեկամին վրայ , — կատաղի աշխատող մը , որ ամէն օր նորանոր յաջողութիւններու մէջ իր եռանդը կը կրկնապատկէր , առանց երբեք ընկրկելու պատահական խոչընդոտի մը առջեւ , աւելի կամ պակաս հարթելի :

Եւ սակայն , իրականին մէջ , ծոյլ մը չէր Արսէն Անմեղեան : Հակառակ իր բնատուր ձիրքերուն և մտաւորական գոհացուցիչ պաշարին , որոնցմով իր պաշտօնին պահանջած բոլոր պայմանները լիովին կը գոհացնէր , վաճառատունին գործերուն բնութեանը և զազանիքին թափանցած ըլլալով խորապէս , և սակայն իր միտքը զուրկ էր այն թեկադրիչ կարողութենէն՝ որով պատրաստուած կ'ըլլան սովորաբար՝ անվախ ձեռնարկներու , խիզախ գործատէրերու միտքերը : Զինքը իր միջակ , աննշան հետեւակի դերէն չեղեցնելով՝ նոր ասպարէզի մը , կոյս շահաստանի մը մէջ մտցնելու նպատակ ձեռներէցութիւնը և յանդգնութիւնը կը պակսէին իրեն : Եւ եթէ գիտակցութիւնը ունէր անակնկալ հսկայ շահերուն փորձութեան , շահադիտութեան [speculation] և սակարանի տենդոտ ելեւէջներու հետեւանքով քիչ քանի մէջ վաստկուած կամ կորսուած մեծ գումարներուն աղետալի հրապոյրին , որոնք ա'յնչափ մոգական ձգողութիւն մը կ'ունենան երբեմն զրամի ծարաւահիւծ հոգիներու վրայ , այդ տեսակ արկածախնդրութիւններէ պարզապէս վախ կ'ըգար ինքը , արդէն արկածեալ մը , և ո'չ իսկ կը համարձակէր պզտիկ , չնչին գումար մը վտանգել՝ գոնէ փորձելու համար իր անստոյգ բախտը : Ու բանտուած , փակուած իր յաւիտենապէս միօրինակ ու անհրապոյր գործունէութեան սահմանին մէջ , — գրասենեակին չորս պատե'րը , — իր ախուր ու տափակ կեանքին դրուագները կը հոլովէր ամէն օր , առանց իր առօրեայ սովորական , մեքենական աշխատութիւններուն ժամերէն դուրս՝ այդ մգլտած , ամո'ւլ պաշտօնավարութեան փոշին — ցե'ցը — թօթափելու միջոց մը գտնելու : Ստեղծիչ զօրութեամբ միտքէ մը անկախաբար , և նոյն իսկ թերեւս անկէ անբաժան իր հոգիին համա'ր ալ բոլորովին անծանօթ էր այն կորովալի թափը , որ շատ անգամ աննպաստ դիրքի մը ենթական կը փրկէ իր տուայտանքէն , նետելով զայն , ուժգին , վճռական արձակումով մը , տարբեր ճամբու մը ուղղութեան մէջ . — որովհետեւ ինքը կը նմանէր լարուած հսկայ ժամացոյցի մը՝ որուն զսպանակը քախախտուած ըլլայ . . . :

* *

Արամ Զանակեանին համար Արսէն մէկն էր անտարակոյս այն անկարող հոգիներէն՝ որոնք իրենց վատուժ ու վարանոտ բնութեամբը կը սայթաքին կեանքի պայծարին մէջ : Ինքը յամառ ու դիմադրաւոր և իր կոչումին ու դերին մէջ արդէն յաջողած մը , առաջին օրէն իսկ նշմարած էր իր բարեկամին վրայ՝ անոր բեղուն միտքին և անհատական դեռ շատ մը աղւոր առաւելութիւններուն քով՝ հոգեկան դեղեկոտ ,

անհաստատ վիճակ մը, որ ա'յնչափ գոյութիւն ունի ջլախոտութենէն զլրայ : Ու ցաւած էր, անկեղծօրէն : Ինք Արսէնը կը սիրէր : Փափուկ ու դիւրագրգիւռ, բայց միեւնոյն ատեն իրենին պէս հոգարտ հոգի մը կը կրէր ան, և այդ հոգարտութիւնը շատ անգամ կ'զգացուէր՝ իր մէկ մտատանջութիւնը կամ թաքուն վիշտը ուրիշին չյայտնելու յուսահատ փորձերուն մէջ : Որովհետեւ, իբր շառաւիղը ծանօթ և շատ յարգուած ընտանիքի մը, հօրմէն ժառանգած ըլլալով կենցաղագէտ և ազրա՛ծ մարդու մը բոլոր արու և գեղապաշտ բնազդները, և մօրմէն՝ ճկուն դիւրաթեքութեամբ ու շնորհով մշտայոյց և ազազուն հոգի մը, Արսէն Անմեղեան, հակառակ իր նիւթական միջոցներուն անբաւականութեան, բաղձացած էր բարեկեցիկ երիտասարդի մը պատրանքը տալ միշտ, և այդ պատճառով մեծ զոհողութիւններ կ'ընէր, ամէնուն աչքին հախանձելի վիճակով մը երեւալու համար : Չարմանալի՛ բան : Ինչի՞ կը ծառայէր այդ կեղծիքի մտահոգութիւնը, և ինչո՞ւ, երբ ասդին, Արսէն իր արժանիքովը և ամէն կողմէ վայելած համակրանքին շնորհիւ չէր փորձուեր, զանազան միջոցներով, իր գիրքին բարեւքումին ճարը գտնելու . . . : Գաղտնիք : Ո՛չ : Որովհետեւ այդ ձեռով ըլլալիք որ և է դիմումի մը մէջ պարզապէս նուաստացում կը տեսնէր և կը խորշէր անկէ ա'յնչափ օրչափ գարշելի դեռունէ մը . . . : Քանի՛ անգամներ Արամ այդ տեսակ առիթներ ստեղծած էր իրեն, վայլուն հեռանկարներով պաշտօններ ու գիրքեր ամէնքն ալ, կը բաւէ՛ր որ այս ինչ անձնաւորութեան կամ այն ինչ ջոջին ներկայանար անգամ մը, յանձնարարական տոմս մը ստանալու անկէ, որով ամէն գթութեամբ ինչ պիտի հարթուէր : Եւ Արսէն, իր բարեկամին այդ ծառայութիւններէն խիստ զգածուած, կը պատասխանէր դառնազին ժպիտով մը :

— Ո՛չ, Արամ, չափազանց շնորհակալ եմ, բայց այդ բանը չեմ կրնար : Հոգիս, տկար, գուցէ հիւանդ հոգիս իր բոլոր ուժովը կ'ընդլզի այդ դաղափարին դէմ . . . : Ատիկա ստորնացում մըն է ինծի համար . . . չեմ կրնար, չեմ կրնար . . .

Եւ իր աղւոր, սեւ աչքերուն մէջ, մոլորուն ու տարտամ ցաւ մը իր տրտմութիւնը կ'ստուերոտէր . . . :

— Բայց սիրելիս, կ'ըսէր Արամ, համոզիչ ու մեղմ ձայնով մը, դուն քու արժանիքիդ չգնահատուելուն դէմ կը դժգոհիս և ներկայացած նպատաւոր առիթներէն չես ուղեր օգտուիլ . . . տե՛ս, տակաւին այսօր իմացայ թէ * * * դրամատունը նոր պաշտօնեայ մը առեր է լեցուն ամսաթուակով մը . գո՛նէ ապագայ կայ այդ օտար դրամատուներուն մէջ աշխատողներուն համար . քու ծառայած Հայ վաճառատունիդ մէջ ի՞նչ կայ . . .

— Ծիշդ է . բայց, ինչպէս գիտես, դիմումի պարագան է որ մտածել կուտայ ինծի, կը կրկնէր Արսէն՝ գլուխի զարմանալի օրօրումով մը :

Ա Ն Մ Ա Տ Ձ Ե Լ Ի Ն

Տեսարանը կ'անցնի ժողեր Տ'Արժանքեօյի տունին մէջ, որ կանգնուած է Կիսա-
խառնի հուրիներուն փառքին համար, իրենց հիացողներուն կողմէ: Շլմոնե-
ցուցիչ պերճանք մը, որ առանց մէկ երկուքի կ'ըսէ թէ այդ տները, քանկա-
զին փառեկն մինչեւ կարասիները, խօսուն ապացոյցն են այն քեֆաբոր ջանքե-
րուն, որոնք իր ալլազան ձեւերով շուայլուած համբոյրի մը կը կարօտին: Ժամը
զիշերուան ինն է: Նրբանցիին մէջ:

ՍՊԱՍՈՒՀԻՆ (հօսքը կ'ուղղէ Մարիսիւրէի, որ բարձրահին կը հանձնէ).

— Պարտնը սենեակ մտնել պիտի ուզէր:

ՄԱԹԻԻՐԷԼ. — Ի՞նչ ըսել է «պիտի ուզէր մտնել»։ Ի՞նչ դարձա-
նալի խօսք . . . : Ի՞նչ, արդեօք սովորութիւնն չունի՞մ ամէն իրիկուն
դալու. . . : Կարծեմ ամիսը 20,000 ֆրանք տալէս ետքը . . .

ՍՊԱՍՈՒՀԻՆ. — Տիկինը ինծի պատուիրեց այս իրիկուն բացար-
ձակապէս ո՛չ մէկը ընդունիլ:

ՄԱԹԻԻՐԷԼ. — Նո՛յն իսկ զի՞ս:

ՍՊԱՍՈՒՀԻՆ. — Նո՛յն իսկ ձեզ:

ՄԱԹԻԻՐԷԼ. — Յիմա՞րայա՞ք դուք երկուքդ ալ: (Եւ ժողերի
սենեակին մօտենալով).

ՍՊԱՍՈՒՀԻՆ. — (Մարիսիւրէի վրան կը վազէ արգիլեղու համար). —
Բայց պարո՛ն, քանի որ կ'ըսեմ թէ մուտքը ար. . .

ՄԱԹԻԻՐԷԼ. — Մտիկ չեմ կրնար կոր ընել քեզ: (Յանկարծ նկրս
կը մտնէ, ուր՝ ժողեր, ահագին ֆանսկոսքեալք քերքերու դիմէ մը
մէջ, սեղանին առջեւ, գրեղու ե գրադար):

ԺՕԶԷԹ. — Քանի որ դուռս բանի բանալով ներս մտար, դո՛նէ
հասէ՛ եւ ամենափոքր ձայն մը անդամ մի հաներ. . . պիտի աշխատիմ:

ՄԱԹԻԻՐԷԼ. — Բայց ներդուրի՞ն, ես. . .

ԺՕԶԷԹ. — Ո՛չ մէկ բան կը թոյլատրեմ, հասէ՛, կարդա՛, ըրէ՛
ի՞նչ որ կ'ուզես, բայց պայմանով որ չըսել ըսուած բանը չը հանես:

Մարիսիւրէի տեսնելով որ գեր ասեկուան մը համար հակառակիչը
անօգուտ է, կը նստի եւ ապշուքեալք կը դիմէ ժողերը, որ խորապէս
բաղուած, կը շարունակէ պարբերութիւններ գրել, աւելի, նօթեր դնել
շուսանցիին մէջ. . .

ՄԱԹԻԻՐԷԼ. — Կրնա՞ս ըսել թէ ի՞նչ բանով կ'ըզաղիս:

ԺՕԶԷԹ (Կատարօրէն) Է՞ճֆ. . . սակայն սո՛սկալի է աս. . .
ճիշդ այն վայրկեանին ուր կը կարծէի սիրուն ածական մը գտած
ըլլալ. . .

ՄԱԹԻԻՐԷԼ. — Է՛յ հասկցանք, ըսէ՛ թէ որո՞նք կ'ուզենք կոր
զրածդ:

ԺՕԶԷԹ . — Ո՛չ մէկուն կը գրեմ կոր . . . (Գրիչը վար դնելով)
Արդէն խերովը ամէն բան քեզի ըսելն է . . . որովհետեւ գիտեմ որ
հանգիստ չպիտի թողուս . . . գիրք մը կը պատրաստեմ :

ՄԱԹԻԻՐԷԼ (Ապշած) Գիրք մը , դո՞ւն :

ԺՕԶԷԹ . — Այո՛ , ե՛ս , չեմ մեղադրեր ապշելուդ համար . եթէ
սանկ քիչ մը քիչ մակերեւութային միտք մը ունենայիր , պիտի կրնա-
յիր հասկնալ , ըմբռնել այն փոփոխութիւնը՝ որ իմ մէջս տեղի կ'ունե-
նար ատենէ մը ի վեր : Ես այս գործիս ձեռնարկած եմ ո՛չ ուրիշ բանի
համար , բայց եթէ գոհունակութիւնը ունենալու մէկէ աւելի օգտակար
բաներ ձօնելու իմ ժամանակակիցներու հասցէին :

ՄԱԹԻԻՐԷԼ . — Օգտակար բանե՛ր . . . այսինքն սիրային դեղա-
գիրներ . . . :

ԺՕԶԷԹ . — Օ՛ , դուն երբեք չպիտի կրնաս հասկնալ ի՞նչ բան որ
կրնայ ծնիլ ինծի պէս սիրտ ունեցող աղջկան մը ներսիդին . . . դուն
չպիտի կրնաս ըմբռնել թէ , ես՝ սիրային աշխարհի դատապարտեալը ,
ուրեքցած զարգացումիս չնորհիւ ամէնէն աւելի կարող եղած եմ ճանչ-
նալու , այդ աշխարհի նողկալի կողմերը , պատրանքները և խաբկանք-
ները , զորս միշտ կը հետապնդենք , սակայն երբեք չըլլար որ թիրախին
հասնինք :

ՄԱԹԻԻՐԷԼ . — Ի՞նչ անուն պիտի տաս արդեօք , կրնամ հաս-
կնալ :

ԺՕԶԷԹ (Կասարեալ յոջութեամբ) . — «ԱՆՄԱՍՏԵԼԻՆ» :

ՄԱԹԻԻՐԷԼ . — Է՛յ , անպատճառ ամերկացի միլիոնատէր մըն է
տա՛՝ «անմատչելի»դ :

ԺՕԶԷԹ . — Ապուշ բաներ մի ըսեր , Աստուածդ սիրես :

ՄԱԹԻԻՐԷԼ . — Աղէկ սակայն , անշուշտ կը ներես որ սանկ կտո-
րիկ մը զարմանամ : Երբ սովորականին պէս, — առաջուց՝ միտքիս առջե-
քերելով իրիկունները քու մօտդ անցուցած այն հեշտալի ժամերը , ուր՝
դուն քու միշտ արբշտիչ նոր փորձութիւններովդ , խոստովանելի չթուեց-
ներուդ բարեացակամութիւնովը և խռովեցուցիչ մրմունջներովդ զգիւթիչ
գինովութիւն մը կու տայիր ինծի , — սենեակդ կը մտնեմ , կրնամ
երեւակայել յուսալսարութեանս ահագնութիւնը , երբ աս ամէն հեշ-
տալի բաներուն տեղ , ո՛վ մե՛ծդ Աստուած , կը գտնեմ գրասէր կին
մը՝ որ իմաստասիրելու ախտէն բուժուած է : Յանուն Հօր Յիսուսի
Քրիստոսի , անո՛ւշ , այս կարգի ձիւն-փորձանք բաներ երբոր քու մէջդ
խլրտիլը կ'զգաս , կը խնդրեմ որ առաջուց զիս տոտնց պատրաստես . . .

ԺՕԶԷԹ . — Շա՛տ լաւ , ահաւասիկ քեզի կ'ըսեմ թէ՛՝ ան քու
ճանչցած «հրաւրաւ շրթունքներով բարեացակամը» , «միշտ նոր փոր-
ձիչը» , «իր խռովեցուցիչ մրմունջներով զգիւթիչ գինովութիւն հայ-
թայթողը» ա՛յն ատեն պիտի ըլլամ միայն , երբ մէկ գլուխը աւար-
տելուս միւսին՝ և կամ մէկ ներշնչումէ միւսին անցնիմ :

ՄԱԹԻԻՐԷԼ . — Հը՛մ . . . է՛ , ադ հիանալի՛ բան պիտի ըլլայ . . .
կը կարծե՞ս որ յաճախ գրես :

ԺՕԶԷԹ . — Ամէն օր , մինչեւ որ գործս աւարտի :

ՄԱԹԻԻՐԷԼ . — Գործը՛ . . . : Աղէկ սակայն , ի՞նչ պիտի նկարագրես
նայինք հոգ . կեանքիդ միջագէտները . . . չէ թէ քու հազար եւ մէկ
գիշ . . . կ'երեւայ թէ քու ինքնակենսագրութիւնդ պիտի ըլլայ ադ :

ԺՕԶԷԹ (Արհամարհող ժպիտով մը) . — Ո՛չ , բարեկամս , այդ
աղտոտութիւններուն չէ որ աչքերս ուղղած եմ . միտքս աւելի բարձ-
րով զբաղելու տրամադիր է . պիտի ուղեմ մանրամասն իմաստասիրա-
կան քննութեան մը ենթարկել հոգիի մը բարեշնչումները : Նախ եւ
առաջ պիտի ցուցնեմ այդ հոգին , որ սիրոյ հիանալի երազովը կը տա-
ռապի եւ որուն դէպի սէր թեւատալաց ճախրումը կ'ընդհատուի ու կ'իյ-
նայ մոլոր թեման—նոր Գողգոթայի մը ճամբուն—մէջ : Հազիւ ուրեմն
ընկճուած գլուխը կը վերցնէ , ճմուռած սիրտը կ'սկսի բարախել ուժ-
գնօրէն եւ ահա խեղճին յուսագործ ճիշիւրը կը խեղդուին կոկորդիւն
մէջ , մանուկ հոգին նորէն կը գայթի . . . միշտ միեւնոյն կրկնեւերոյ-
թը . . . անկարող խեղդելու գերագոյն զգացողութիւնը , անծիր զգա-
ցումը , որոնք կարծես այս աշխարհքին վերաբերած չըլլային . . .
Անմահչեղի՛ն :

ՄԱԹԻԻՐԷԼ . — Քիչ մը շա՛տ վերացական :

ԺՕԶԷԹ . — Ծիւղ գիրքը առաջնորդող գաղափարս է համառօ-
տապէս ըսածս . բայց իմ այս տեսութիւնս խռովայոյզ ա՛յն տեսակ
դէպքերու եւ նկարագրութիւններու մէջէն դուրս կը ցայտէ որ՝ հեղինա-
կութիւնս՝ սիրային խիստ շանկան ու գեղեցիկ դրուագ մը կրնայ
համարուիլ : Կեանքի նախաքայլերուն , հերոսահիս շա՛տ մաքուր ,
անբիծ աղջիկ մըն է , որ . . .

ՄԱԹԻԻՐԷԼ . — Աւելորդ է . եթէ չի պատմես աղէկ կ'ընես :

ԺՕԶԷԹ . — Ինչո՞ւ :

ՄԱԹԻԻՐԷԼ . — Որովհետեւ ընթերցանութենէդ այնչափ հաճոյք
չպիտի առնեմ , որչափ երբ ես դայն հանդարտ միտքով կարդամ :

ԺՕԶԷԹ (Դառնալով) . — Ուրեմն լռէ՛ , պիտի աշխատեմ :

ՄԱԹԻԻՐԷԼ . — Ծխել ներելի՞ է :

ԺՕԶԷԹ . — Բացարձակապէս ո՛չ . արդէն գլուխս կրակներուն
մէջն է . գնա՛ կամ պառկէ՛ :

Մաքիւրեղ , որ հեզգհեհ համոյք կ'զգայ եղածներէն , արոնի մը
վրայ երկնաշող՝ աջերը մրափել կը ձեւացնէ , երբեմն Ժօզեփին շար-
ժումները ու նստածիք կը դիտէ , ուր մեհափսե մուսլիմին սակեմ
կարապի սպիտակութեամբ քեները կը ճանաչէ : Բաւական երկար ասեմ
շունքիւն կը տրեմ . խոր շունքիւն մը՝ այս հեշտարդոյ սեկեակիւն մեջ ,
պէտք է երեւակայել քե ինչ ստուպեցուցիչ կ'ըլլայ : Մաքիւրեղ ,

սեաներով որ Հեղինակուհիին աջերը միջոցին մեջ կը խառխափեն , առանց տղ մը իսկ մտնելու , կը մօտենայ եւ այսոյ շրթունքները ականոր
նախին դպցնելով կը համբուրէ .

ԺՕԶԷԹԱ. (Բարկուքեկէն գրիչը կը կոտրէ) . — Օ՜հ . . .

ՄԱԹԻԻՐԻԷԼ . — Բայց ա՛ն ի՛նչ է , ազուարտ , քիչ մը առաջ դուն
էիր ըսողը որ մէկ ներշնչումէդ միւսը անցնելուդ ազատ էի իմ հիւ-
յումս գործնականապէս յայտնելու քեզի եւ կարծեմ միտքի ճիշդ . այդ
վիճակիդ մէջ կը գտնուէիր եւ գիտես թէ ասանկ հազուադիւս առիթ-
ներ չփախցնելու ի՛նչ մեծ առաքինութիւն մը ունիմ :

ԺՕԶԷԹ . — Գազափարներու աշխարհին մէջ գտնուիլ , երեւակա-
յութեան թռիչքին գեղեցկագոյն բան մը յղանալ . . . եւ յանկարծ
դգալ մարդուն մէկը՝ որ եկեր քեզ կը համարէր՝ . . . ականջիդ ետեւէն
զուհիկ խոսքեր մը կը մտնայ . . . աս ի՛նչ անկում է , ա՛հ , Աստուած
իմ : Եւ սակայն այսպէսնելու չէ , որովհետեւ պէտք եղած տրամադրութիւ-
նը , չորսնու համար կարողութիւնը , չունիս , կը սրակսի քեռէ , որպէս զի
բան մը զրկել կարենաս , գործ մը արտադրես , որով չպիտի կրնաս ալ հաս-
կնալ թէ՛ այդ տեսակ անկում մը , ի՛նչ գառնութիւն կը ներարկէ մար-
դուն հոգիէն ներս :

ՄԱԹԻԻՐԻԷԼ (Նեղսրսած) . — Կէս գիշերուան արեւէն բան մը
չէ մնացած , եւ ահա երկու ժամ կ'ընէ որ ձեռքս ծալած նստած , քեզ
գիտեմէ տարբեր բան մը ըրած չունիմ . պիտի ուզէի հասկնալ թէ երկար
պիտի տեւէ՞ այս կատակերգութիւնը :

ԺՕԶԷԹ . — Ի՛նչ կ'ուզէիր հապա . . .

ՄԱԹԻԻՐԻԷԼ . — Եթէ երբեք մտադիր ըլլայի այս իրիկուն հոգե-
բանական խնդիրներ իմանալու , կամ գրուածքներ կարդալու , այն
ատեն չիտակ գրավաճառիս կ'երթայի եւ Պուստէին 2,75 Ֆրանքոց գիր-
քերէն հատ մը կ'առնէի եւ տունս կը վաճակէի ճիշդ ատկէ բոլորովին
տարբեր տրամադրութիւն մը ունենալուս մամար է որ հոս եկած եմ ա՛ .

ԺՕԶԷԹ . — Ըսել է դուն ալ բուսական միամիտ ես եղեր կարծե-
լու չափ թէ՛ ես ալ իմ տրամադրութիւններէ՛ս պիտի չեզիմ . հա՛ , հա՛ .
հա՛ (պզտիկ խնդրիկներ) :

ՄԱԹԻԻՐԻԷԼ . — Ուրեմն պզտիկ լսողատուութիւն մը մեր երջութիւն
միջեւ : Ես քու հոգեբանական գրութիւններդ մտիկ չընելովս , չա՛տ
չա՛տ զլխու ցաւէ մը ազատած եւ . . . չնորհներէդ զրկուած պիտի
ըլլամ , մինչդեռ դուն եթէ հրաժարիս իմ տրամադրութիւններուս հա-
մաճայն երթալէ , այն ատեն պէտք է որ աչքդ առնես տարեկան 300,000
Ֆրանքէ ալ հրաժարիլ . (Զայն գրաւելու ջանքեր մը ընելով) . Եւ յետոյ
քու այդ զերադոյն , վեհ զգացումներովդ , զիս կը ձանձրացնես կոր :

ԺՕԶԷԹ . — Է՛ , մտածե՛ս ինչ , երբ մարդ գրականութեամբ կ'ըլլայի ,
արիւնը ղէպի ուղեղը կը խուժէ , գործունէութիւնը գլխուն մէջ կը

կեղբորնանայ . արդ , հիմա որ ես մտաւորական կեանքով կ'ըրազիմ ,
ըսել է որ երէկի բնազդները կ'ոչնչանան , կը չքանան իմ մէջս . հետե-
ւարար պարտաւոր եմ միայն , մտային կարողութեանս բարձր գործու-
նէութեան համար ապրիլ : Սակայն կրնայ ըլլալ որ՝ իմ ապրելու այս
նոր ընթացքիս մէջ՝ սկստահի որ վաղեմի ժողէթներ զան խախնուիլ...
և աւելորդ է կասկածիլ թէ անոնք քեզի հաճոյք չպիտի պատճառեն...
մինակ թէ համբերել դիտնանք . «սպասէ՛ և յոսամ» :

ՄԱԹԻԻՐԷԼ . — Ուրեմն այս իրիկուան համար բախտը ոչի՞նչ ունի
մեզի համար :

ԺՕԶԷԹ . — . . . : Պիտի մեկնի՞ս :

ՄԱԹԻԻՐԷԼ (կը նստի) . — Ոչ , պիտի մնամ . . . պիտի սպասեմ :

ԺՕԶԷԹ . — Ի՞նչպէս որ կ'ուզես :

Ժողքը կ'սկսի գրեշ . մինչ Մաթիւրեշ թագնոցին վրայ կ'երկնայ :
Լուսքիւն Առնուան ժամը 1ին՝ յուսահասած կ'եղայ . գաւազանը ու
զիսարիւր կ'առնէ , դեպի դուռ կ'ողողալի . ուրիշ չոյի չոր մնաս բարով
մը կ'ըսէ , որ իսրոհէ կ'արձագանգի սենեակին լուսքեանը մէջ :

ԺՕԶԷԹ (Մեկին գրիչը վար դնելով) . — Շա՛րլ :

ՄԱԹԻԻՐԷԼ . — Հրամայէ՛ :

ԺՕԶԷԹ . — Մոռցայ , տե՛սար մի . քեզի բսելիք ունէի՝ փոքր
ծառայութեան մը մասին , ա՛յնչպիսի զբաղած էի որ . . .

ՄԱԹԻԻՐԷԼ . — Հը՛մ , կը տեսնեմ որ գործնական բաներէ՛ հառել
կ'սկսես կոր . . .

ԺՕԶԷԹ . — Սթէֆըն նորէն եկաւ վերջերս իրմէ՛ գնած զոյգ մը
ձիերուս փոխարժէքին համար :

ՄԱԹԻԻՐԷԼ . — Պէտք չէիր գնել . . . և յետոյ դուն քու ամ-
սականդ ունիս , անոր համեմատ կարգադրէ :

ԺՕԶԷԹ . — Իբաւ է որ քիչ մը ածապարեցի , սակայն . . . չեմ ալ
կարծեր որ 5000 ֆրանքի համար զիս մերժես . . . չէ՞ , Շարլս . (կը
սեսնէ որ Մաթիւրեշ ձեռները գրպանը կը խօթէ) . Ա՛հ , ո՛րչափ աղինւ ես :

ՄԱԹԻԻՐԷԼ (Գրպանէն մեկ երկու ֆրանկ կը հանէ եւ խնամով
հաւերելով) . — Երկու ֆրանք և եօթանասունըհինգ սանթիմ . . .
անաւասիկ :

ԺՕԶԷԹ (Ապշած) . — Կարծեմ ծաղրելու սկստր :

ՄԱԹԻԻՐԷԼ . — Բնաւ երբեք . . . մէկ հատրիւն գինն է՝ զոր կը
վճարեմ կոր . ամբողջ զիշերը գրածներդ մտիկ ընելով անցընել տուիր .
ես , կը տեսնես որ կարծածէդ աւելի առատաձեռն եմ . քուիդ առանց
Պոււմէէն եղած ըլլալու մէկ օրինակի գին կը վճարեմ կոր :

ԺՕԶԷԹ (Խնդալը յիշատակով զայն) . — Սատանորդի՛ . . . կատակը
մէկդի ձգենք , աղուոր Շա՛րլս , հաւատա՛ որ պէտք ունիմ . . .
(Քծնելով) Դուն քու պղտիկ ժողէթիդ միակ սէրն ես (Բախտաւորելով)
սանկ վիզէս համբուրէ նայիմ , սա քեզի սովորական տեղէն . . .

ՄԱԹԻԻՐԷԼ (Հեռանալով) . — Ո՛չ , ա՛յ , ո՛չ . . . հաքէն չեմ
կրնար պէտք եղած ներշնչումը ունենալ . գիտե՞ս ա՛ . ուղեղիս վիճա-
կէն կախում ունի . աս անանկ բան մըն է որ . . . քունս եկած է , պիտի
պառկիմ :

ԺՕԶԷԹ (Խոստմանից շրթունքներ մօտեցնելով) . — Կեցի՛ր :

ՄԱԹԻԻՐԷԼ . — Հաւատա՛ որ չեմ կրնար մնալ . . . զիս վերա-
ցուցիր աս գիշերը եւ քու նիւթապաշտութիւնդ կը վերաւորէ կոր
«գերագոյն , լինչ զգացումներս» . և յետոյ վրաս 5000 ֆրանք չունիմ :

ԺՕԶԷԹ . — Ա՛խ ստախօս , կը տեսնեմ կոր որ թղթապանակդ
պանկներով ուռած է :

ՄԱԹԻԻՐԷԼ (Ժպտելով) . — Կրնայ ըլլալ որ ուռած ըլլայ . . .
բայց . . .

ԺՕԶԷԹ . — Բայց ի՞նչ :

ՄԱԹԻԻՐԷԼ . — Որովհետեւ անհասցեղի՛ է ադ . . . գիշեր բարի :
Եւ դուրս կ'եղայ : Ժօգեթ սպորշ կտրած , երկար ասեմ հոն կը
մնայ փառացած :

Թարգմ. Ա. Թ.

MICHEL PROVENS

ՄԱՅՐԱԿԱՆ ՍԷՐ*

Երեսասարդ մը ասեմով
Բոլոր սիրով կը սիրէր
Աղջիկ մը — Եւ քսէ՛մ ո՞վ
Երբեք այս բան չէր եր . —

Բայց սիրունին օր մը իրեն
Ըսաւ . — Կ'ուզե՞ս քեզ սիրեմ —
Ականջն ի վար մեղմօրէն ,
— Ըսածս քե՛ , քեզ տեսնեմ .

Գնա՛ բեր ինձ , կը լսե՞ս ,
Մօրդ սիրքը եւ տուտով
Շուններուն տակ եւ այսպէս
Ձեզ սիրեմ իմ հոգւով . —

Շուտ մը վազեց յիմար ,
Օ՛հ , ի՛նչ սեւ օր , ի՛նչ փորձանք :
Զարկաւ սպաննեց իր մայրը
Որ տուած էր իրեն կեանք :

Խրլիլ սիրքը այդ կուրծքէն
Եւ դուրս ելլելն մէկ եղաւ .
Շուտ հասնելու տենչանքէն՝
Վազած ասեմ վար ինկաւ .

Սիրքը ձեռքէն սանեցաւ
Գրորեցաւ , վար , գետին .
— Ո՞ւրեքդ , զաւա՛կս , ցտեցաւ —
Հարցոց սիրքը լալագին :

Յ. ԱԼՓԻՍԵ

* Նմանողաբար Ժան Ռիշըէնի :

ԿՈՐԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՄԷԼ ԹՈՂՈՒՐՆԵՐԻՆ ԶՈՒՐՋԸ



Կորին Վարդապետ **ԱՐԷԼ Մամուլի** գրած յօդուածի մը մէջ կը ներկայացնէ կտրգ մը նկատողութիւններ, նկատմամբ «Հայ միտքին» հանդէպ խմաստասիրութեան», որոնց մէջ ուշադրութիւն հրաւիրող թիւր ըմբռնումներն և յախուռն վճիռներէն վեր կ'առնենք հետեւեալները : Ընդհանուր հայեացք մը նետելով ցեղին եւ միջաւայրին իրարու վրայ ունեցած փոխադարձ ներգործութեանց վրայ, կը վճռէ որ հողին կապուած երկրագործները իսպառ զրկուած են գեղարուեստի և խմաստասիրութեան ընդունակութենէն, եւ թէ անոնք «հոգեկան պահանջումն իսկ չունին իրենց ներաշխարհին մէջ» : [Ի՞նչ ըսել է «հոգեկան պահանջում» չունին. պտալօ՞, Վարդապետը ներաշխարհ ալ կարգացեր է:] Կ'երեւայ սա՛ կը նշանակէ թէ՛ երկրագործները և խաշնարածները ճշմարտութեան հետապնդելու և արուեստ մը ստեղծելու ընդունակութիւն չունին : Յախուռն է վճիռը : Կ'ըսէ թէ երկրագործ և խաշնարած ժողովուրդները իսպառ անընդունակ են գեղարուեստի եւ փիլիսոփայութեան, տալ մը վարը Յունաստան և Իտալիա իբր օրինակ մէջ կը բերէ, անշուշտ անգիտակցով որ անոնց ալ սղբնական պարագումը՝ երկրագործութիւնը և խաշնարածութիւնն է եղած : Իր յիշած «ամպածրար Ողիմպոսը», «Արշակազգացի ջինջ ծովը», «Երկինքի կապոյտը» մեծ լուսաբանութիւն մը չեն տուեր այս զարտուղութեան մասին, ոչ ալ «հրապոյր, շնորհ, զեղեցկութիւն» բառերը : Իր կարծիքով, գեղարուեստ և փիլիսոփայութիւն ծներ են յանկարծ Յունաստանի և Իտալիոյ մէջ [գրականութեան] իստքը չկայ] բայց կրօնքը ուր մնաց : Ասոր ալ դարմանը գտեր է Կորին Վարդ., ըսելով թէ «ժողովուրդներ ալ կան որոնք սիրեր են կրօնական գաղափարներով միայն անանիլ (?) և իրենց հոգին թախքներ (?) առեր է դէպի անծանօթ զօրութիւնը : Միայն՝ Կորին Վարդ., կը մոռնայ յիշատակել թէ այդ ժողովուրդներուն պարագումը ի՞նչ է. չէլա՛ն անոնք ալ հողագործ ըլլան Միւս կողմէ

ալ փիլիսոփայութիւնը անպարանքով «Ողիմպոսի ամպածրար» զազածը ձգեր է . . .

Այս խառնակութեան մէջ սա կը հասկցուի որ՝ ժողովուրդները, Կորին Վարդ. ըմբռնումով երեք որոշ դատարկութեան կը բաժնուին :

Ա. — Երկրագործներ, որոնց կը պակսի գեղարուեստ և փիլիսոփայութիւն, և որոնք պարզ «անբան»ներ են, ինչպէս կը սիրէ ըսել խառնութեամբ Կորին Վարդ. :

Բ. — Յոյներ և Իտալացիներ [ըսել կ'ուզէ Հռոմայեցիներ] որոնք բնականաբար բանաստեղծ ու փիլիսոփայ են, վկայ՝ ամպածրար Ողիմպոսը [բայց կարծեմ Հռոմի մէջ Ողիմպոս չկայ . . .]

Գ. — Այն ժողովուրդները, որոնք կրօնական զգացում միայն ունին, և անով միայն կ'ապրին . . . Ըսելիք չկայ այս հրաշալի դատարկութեան : Անցնինք : Դերմանիա ուսումնասիրէ երկիր մըն է եղեր, բայց իբր փիլիսոփայ միայն Քանդը ունեցեր է : Ո՞ւր մնացին Լայպնիցը, Ֆիխթէն, Հէկէլը, Շէլլինգը, որոնք փիլիսոփայութեան գերմանական pléiadeը կը կազմեն և երկրորդական ուրիշ դէմքեր, Հէքէլ, Միւլլէր, որոնք մատի վրայ չեն համբուր : Անգլիա փիլիսոփայական հարցերու réfractaire է եղեր, հակառակ Սքէնըրը ունենալուն : Իսկ Ֆրանսա զիտէ՞ք ինչու Կորին Վարդ. յախառնութեան արժանացեր է, նրովհետեւ կրցեր և կրօնական զգացումին հիմքը բանդել, «Կրօնքի շրթաւները վշտել . . .» : Բասմէտ [ի՞նչ անագին ուսում] փիլիսոփայութիւն մը հնարած չէ (?) եղեր [ըսել կ'ուզէ անշուշտ թէ փիլիսոփայական որոշ դաւանանքի մը հեղինակը կամ հիմնադիրը չէ] ալ միայն գիւշ մը հնաբեր (???) է եղեր : Վիճակ մը «հնաբեր» է. ի՞նչ տղայական բացատրութիւն է սա :

Իսկ մե՞նք. մի՛ հարցնէք, փիլիսոփայութիւնը ո՞ւր, մենք ո՞ւր : Դաւիթ անյաղձ խեղճ Յարգմանող մըն է, Մեսրոպ, Սահակ Հայտատները միայն գտեր են : Իսկ Նարեկացի եւ Շնորհալի «աղօթքի և կրօնքի մարդիկ» եւ եղեր, «որոց զրադուստ աղօթել և շարական երգել» է եղեր : . . . Մենք այն հաւատքը ունէ՞ինք որ՝ Նարեկը Imitation de Jésus-Christին կը հաւասարէր, զաղափարներու

վեհեմեան, կրօնական յափշտակութեան եւ
լեզուի ու բացատրութիւններու նշանակելի
նորութեան տեսակէտներով :

«Իմաստասիրութեան մէջ ձեռքեր կան՝
որոնք մարդկային մտքին իմաստութիւնը կամ
յիմարութիւնը կը պատկերացնեն»։ չի հաս-
կցուիր աս. ի՞նչ ըսել է . արդեօք իմաս-
տասիրութեան ուսումը «յիմարութեան» եւ
«իմաստութեան» գլուխներ ունի, տեսակ մը
Chapitre des . . . chapeaux. «Ինչպէս ամէն
ժողովուրդի չէ տրուած գեղարուեստի տիրա-
նալ, այնպէս ալ ամէն ժողովուրդի տրուած
չէ իմաստասէր ըլլալ» . . . Հապա Յոյները
և Հռոմայեցիները թէ՛ արուեստագէտ և թէ՛
փիլիսոփայ էին [*], Յետոյ, և թէ՛ «մարդկային
միտքը ամէն կողապարի շնորհակալ է» ինչո՞ւ
փիլիսոփայութեան անընդունակ ըլլալ : Հե-
տեւարար, [գեղարուեստի ամէն գեղեցիկ բան
վախճան մը ունի. toujours du plaisir
n'est pas du plaisir կ'ըսէ Վոյթէ] հարկադ-
րուած կ'եզրակացնէ. «հասարակութեան իմա-
ցականութիւնը բարեփոխուելու պէտք ունի, որ
միայն կ'ըլլայ ժառանգականութեամբ (???) և
յարատեւ ուսումնասիրութեամբ» . և այս օրէնքը
անյեղի է եղեր : Հիմա անոնց որ չեն՝ կը
մնայ ժառանգականութեամբ և ուսումնա-
սիրութեամբ» ջանալ փիլիսոփայ ըլլալու
երբ . . . հողագործ չեն, խաշնարած չեն :

Բոլոր յօդուածը խմբագրուած է այս
ոգիով, որմէ կ'երեւայ թէ՛ Ա. — Կորին
Վարդապետ իմաստասիրութեան հմուտ չէ[*]
պէտք եղածին չափս Բ. — Տիրացած չէ իր
նիւթին, ինչ որ անհրաժեշտ պայման է, նախ
հասկցունելու, յետոյ գնահատուելու համար :

ՎԷՆԻՍ

ԳԱՒԱՌԱՅԻՆ ՆԱՄԱԿԸ

ԽՄԲԱԳԻՐԻՆ

Բ. —

Հաւատացէք որ այդ իսկապէս գրական
մեծ մարդիկը կը պզտիկնային աչքիս՝ իրենց
պարզ ստորագրութիւններով : Եւ բունի՛ ան-
սովոր կամ ֆաւաբիքիսիս բան մը կը
նշմարէի անոնց ստորագրութիւններուն վրայ :
Հիմա սկսան ստորագրութիւն դնելու փորձե-
րը : Կը զրէի, կ'աւրէի, կը սրբագրէի,
նորէի, նորէի, միշտ . . . Ձեր ըլլալ :
Կը զրէի, հետեւէն կը նայի : Միշտ
տափա՛կ կ'երեւար. [ժամանակ եղաւ երբ
համոզուեցայ թէ յանցանքը անունի՛ն էր,
որ ստորագրութիւնս գեղեցիկ չէր ըլլալ :
Անո՛ւն էր որ ա շա մօս չէր : Ուզեցի
անունն ձգել] : Ամենագեղեցիկ և մաքուր տե-
տակէն մինչև ամենամեծունի տեսակները
փորձեցի : Բաղդատեցի գրական մեծ մարդոց
ստորագրութիւններուն հետ : Դիծեր աւել-
ցուցի, բմածին կէտեր, ձեւեր, ծեծեքում-
ներ, ոլորումներ, ծռու զրի ծայրը, նա-
մակը բերնին : Ձեւեր տուի վերջաւորու-
թեանը, օձի ձեւ, սլաքի ձեւ, անփոյծ
կերպով երկարցուցի : Վե՛րջապէս, վերջա-
պէս ստորագրութիւն մը եղաւ որ, խըյսխ. և
մէյ մը երբ նայեցայ, ա՛յնքան հրճուանք
զգացի, որքան չէ զգացած Տիկին Սիրա-
նուշ Լըւալ քե Զըլլալը արտասանած ատեն :
Իսկ ծածկանուն որոշելու համար յատուկ
անուններու բառարաններ մաշեցուցի : Մէկը
խորթ՝ կը հնչէր, ուրիշ մը կոշտ էր. Աստ-
ուած իմ, ո՞վ զիտէ. անո՛ւն մը կը փն-
տուէի, անուն մը ու չէի՛ գտներ, որովհետեւ
ամէնքն ալ իմաստ մը կամ բովանդակութիւն
մը ունէին և ես անկարող էի բովանդակ
պարտագրութիւն պարտելու : Ու եղաւ որ

[*] ՎԷՆԻՍ կը խեղամիւրէ հոս Կորին Վարդի ըստմը, որմէ բնաւ իր մեկնու-
թիւնը չը հանուիր :

[**] Մէկ յօդուածի համար մարդը խաչը չեն հանել, ո՞վ անողորմ ՎԷՆԻՍ Կորին
Վարդապետ խոհուն միտք մըն է, ժխտականորոշմով մը շեշտուած, որ զինքը շատ ան-
գամ կ'առաջնորդէ յախուռն հաստատաբանութիւններու : Իր գրականութիւնը բնորոշող
այդ յատկանիշը կը կրկնուի ո՞նի ու գրական դարձեալիս այն անփութութիւնով, որ իր
զրիչին մեծադոյն թերին կը կազմէ եւ իր գրուածքներուն տկարացումը կը պատրաստէ :
Աւելի՛ ուշադիր ըլլալով գրուածքին զաղափարին հետ. գրականութեանն ալ, և Թօթուկով
ո՞նի իր անփութութիւնը, Կորին Վարդապետ աւելի՛ պիտի բարձրանար իբր գրող :

Խմբ. Գիւն.

ան ալ գտայի՜ ուզէք իմանալ. ա՛հ, եթէ
ան ալ ըսեմ, ա՛լ բան մը չմտի ինձի նամակը
գնաց : Ու ա՛լ կը խորհէի , եթէ հրատա-
րակուէր նամակս , հրատարակուէին քերթ-
ուածներս : Եթէ՛ . . . բայց սա ալ ուրիշ . . .

Ազնի՛ւ բարեկամ , որ համբերութեամբ
կարդացիր այս ֆանթեզի և առն ֆառսն
նամակը , խնդրեմ չելլէ՛ս հրատարակես . ո՛հ
այն ատեն ես . . . կը հասնիմ նպատակիս :
Ի տեսութի՛ւն , ուրեմն , թէ՛ մնա՛ք բարով . . .

Ա՛ս ալ դո՛ւք վճռեցէք :

ՆՇԵՐԱԿ

Յ. Դ. — Իսկ եթէ անունս կ'ուզէք իմա-
նալ, ըսեմ ձեզ խոր յարգանքով և սիրով .

Վսն

Ա. ՍՈԼԱՍԵԱՆ

[Նախ. Ծառն. — Հի՛մա, դուք ալ կրնաք
վճռել ուղղութիւնը ձեր քայլին՝ վարանումին
մէջ որոշումով. — Ե՛ն տեսութիւն, թէ մնաք բա-
րով : Հի՛մա որ հասկցողքիք արժանաւորա-
պէս ձեր . . . խոստմանից բանաստեղծ մը
ըլլալը, պէտք է ջանաք ինքզինքիդ չը հեր-
քել, ատեն-ատեն . . . բանաստեղծելով, այն
պերճախօս . . . տակաւարտութիւնով՝ որ
կրնայ քիչ ատենէն առակի կարգ անցնիլ,
առանց նիւթի ա՛յսչափ անսպառ պերճախօ-
սութեան իր արժէքով : Հեռանալով սակայն
ձեր ոնով խօսելու քմահաճոյքէն, ըսէինք թէ,
ստուգապէս ունի՛ք ձեր մէջ երգիծարանու-
թեան տաղանդը, օժտուած ձիրքերովը սրա-
մտութեան եւ գուարճախօսութեան, որոնք
էական ուտաղձներն են գրականութեան այդ
սեռին : Զանազէք չը ջլատել այդ կարողու-
թիւնը, զոր մշակելով խնամոտ փորձերու մէջ,
կրնաք օր մը յաջող երգիծարան մը ըլլալ] :

ՎՍԵՄ. ՔԵՄԱՆ ՊԵՅ

Վեհ, Սուլթանը գնահատելով Տպագրա-
կան Վերատեսուչ Վսնմ. Քէմալ Պէյի բար-
ւոր և հաւատարմական ծառայութիւնը՝ նոր
շնորհի մը արժանացուցած է ն. Վսնմու-
թիւնը, Լիազաթի Ոսկի Շքադրամ շնորհելով :
Մեր արտագին շնորհատուութիւնները կը մա-
տուցանենք ն. Վսնմութեան :

ՍՈՒԱԿԻՆ ԵՐԳԸ

[ԱՐՁԱԿ ՔԵՐՅՈՒՄՍ]

Վերջալոյս է : Պայծառ երկինքին մէջ և
ժառերուն տակ , տակաւին վարդագոյն արեւ-
մուտքին կողմը , առաջին երեցող լուսաւոր-
ները կը ծարձափին , խիստ փոքրիկ , տկար
շողունով մը : Բայց արդէն , երկրին վրայ,
ամէն բան կը մծննայ . և մութ կանանչին
մէջ միա՛ն ծաղիկները վառ շող մը , որոշ
գիծ մը ունին : Իրենց բուրումն ալ կը ստատ-
կանայ : Իրիկուան պոսին խիստ Թեթեւ
հովը կը տանի վարդերուն բուրումը : Ծա-
ռուղիին երկայնքը, սպիտակ մեխակի ածու-
ներու եզերքները բուրումնաւէտ ձիւնի կը
նմանին : Ժամը հիանալի է : Օդին մէջ խոր
հանգարտութիւն մը կը ծփայ : Թռչունները
մէկզմէկու ետեւէ կը լռեն : Բարձրաբերձ
եղեւինին բարձրէն անգամ մըն ալ կը մնչէ
տատարկը : Կեռնեխի մը սուր սուրումը ,
խայտախի մը խայտալից ճուղղիւնը յան-
կարծ կը նուաղին . և , իրենց գուարթ խա-
ղերուն մէջ խկ , հրաժեշտի թախծութեան
պէս բան մը կայ : Մացառի մը տակ շրկա-
հաւի մը ճլուլլիւնը կը դադրի , դադրած է :
Օդը կը զովանայ : Թխագոյն կապոյտին մէջ՝
լուսաւորները աղամանդէ հուրեր կը ժայթ-
քեն : Ի՛նչ հանդարտութիւն : Այդ պահուն,
այդ յանկուցիչ լուսեան մէջ , նորիկ գիշեր-
ուան մէջ , զովութեան և բուրումներու մէջ ,
սոխալը կը նախերգէ . երկարաշունչ խաղեր
են անոնք, քաղցրահնչիւն ու տխրահնչիւն
միանգամայն , դաշտի մը անձկացուցիչ դան-
դաղութիւնը և հառաչանքի մը խանդոտ խո-
րութիւնը ունեցող : Անոնք մէկզմէկու կը
յաջորդեն , իրարու շաղապատուելով՝ առանց
իրարու խառնուելու , պայծառ օդին մէջ ,
ալիքներու չափածոյ ներդաշնակութեան պէս :
Յետոյ, յանկարծ , լիահագագ , արեցած ու
հանճարեղ , կ'երգէ , խօլ քաղցրերգներով
դուրս կը զեզու իր հողին , վայրի անտա-
ռին Թռչունը , դարձան գիշերներու մեծ
երգիչը . . .

Շնորհակալութիւնք ըզի, Թռչուն. ըզի՛ր՝
կը պարտիմ վայրկեանի մը վերացումս :

ՖԱՆՍՈՒԱ ԳՕՓԷ

USUՅՈՒՍԻ ԳԻՐԲԵՐ

Ստացանք մեր հմուտ աշխատակից Մինաս Երեմյանի յօրինած **Համառօտ Պատմութիւն Ընդհանուր Ազգացը**, Բարձրագոյն Դասընթացի համար, որ կը խառնէ Հին Յունաստանը և Միջին Դարը, պատմութեամբ այն ձեռնհասութիւնով՝ որ ծանօթ արժանիքն է հեղինակին բոլոր երկասիրութիւններուն:

Ընթացք Թուարանութեան, Նախակրթարաններու համար (Ա. և Բ. Տարի) հեղինակութիւն **Զ. Թորոսեանի**: Հեղինակին փորձ ուսուցիչի և կարող հեղինակի անունը՝ զրուական մըն է զործին բաղձացուած կատարելութիւնով յաջողութեան, ինչ որ շերտապէս յանձնարարելի կը դարձնէ գայն վարժարաններու մէջ զօրժանութեան:

Նոր Բերականութիւն Արդի Հայերէն լեզուի, զոր հեղինակած է մեր աշխատակից և ծանօթ բանասէր Յովնանէս Դաւանճեան, հրատարակուած Նշան-Պապիկեան Դրատունին կողմէ, Տարրական Դասընթացի համար: Խնամուած և լաւ աշխատուած հեղինակութիւն մը, որուն վրայ կրկին խօսելու տախիք պիտի ունենանք:

Դարձեալ Նշան-Պապիկեան Դրատունին կողմէ հրատարակուած **Նոր Դասագիրք Թուարանութեան**, հեղինակութիւն **Հ. Ս. Խանճեանի**, Նախապատրաստական Դասընթացի համար, պատկերազարդ: Հ. Խանճեանի թուագիտութեան մէջ ունեցած ձեռնհասութիւնը՝ զործին յաջողութեանը կրնայ զրուական մը նկատուի:

Ժագ, Հաւաքածոյ բարոյական պատմութիւններու, հեղինակութիւն Պրուսայի Որբանոցին ծանօթ ժրգան ու արդիւնաւոր Տնօրէն Դ. Պարտասարեանի: Կը խառնէ հրահանգիչ պատմութիւններ, նիւթ զրօնեցուցիչ ընթերցանութեան մը:

Ընդարձակ և Համառօտ Օրացոյց Դ. Պարտասարեանի: Դիները ամէն տարուան պէս:

Հրապարակով մեր շնորհաւորութիւնը կը յայտնենք Իզմիրի Առաջնորդ և մեր սրբազան աշխատակիցը՝ Տ. Շիլիշե Նպիակ. Դուբեանի, իր անունին տօնախմբութեանը տախիքով:

ՄԵՐ ԿԵՍԵՆԷՆ

ՊՕՂՈՍ ՓԱՇԱՅԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ
ՆՈՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆԸ

Վսեմ. Պօղոս փաշա Նուպար կարեւոր զրամագլուխով վազք մը սահմանած և արդիւնքով մշտնջենական հաստատութիւն մը հիմնած է, բարձրագոյն վարժարաններու մէջ Հայ ուսանողներու ուսում տրուելու համար: Եւ Վսեմութիւնը երկու ուսանողի թոշակ ալ տեւական կերպով Պատրիարքարանի տրամադրութեան տակ դրած է: Պօղոս փաշա այս մասին հաստատած է Նաւ կանոնագիրք մը, հետեւեալ երեք տրամադրութիւններով: Թոշակները պիտի դարբեցուն Ա. Երբ ուսանողը իր ուսանողութեան ընթացքին մէջ կարողութիւն ցոյց չտայ: Բ. Երբ վարքը և բարքը կանոնաւոր չըլլան: Գ. Երբ ուսանողութեան շրջանին մէջ ամուսնանայ:

Տրական անգաղանապահութիւն մը ըլլայ հազարէկ թէ՛ ծանօթ փանքեղիւր և մեր աշխատակից Աղբաւնոր ֆանտսեան լոյս պիտի ընծայէ առաջին հատորը բանաստեղծութիւններու փունջի մը՝ **Աղբաւնոր**, որուն տպագրութեանը կը ձեռնարկէ մօտ օրէն, և ուր կը խառնայ իր հրատարակուած և անտիպ բերթուածներուն զրեթէ ամբողջութիւնը: **Աղբաւնոր** պիտի կազմէ շարք մը, չորս-հինգ հատորէ բաղկացող: Նախորդ շարքու Պոլիսէն Բարիկ մեկնեցաւ ծանօթ զրագլուխի և մեր տաղանդաւոր աշխատակիցը Տիկին Զապէլ Նապեան:

Հանգուցեալ Ռ. Պերպիւրեանի որդին՝ Տիար Օննիկ Պերպիւրեան, աւարտած ըլլալով համալսարանի իր ընթացքը, Եւրոպայէն Պոլիս ժամանեց, ստանձնելու զասեր Պերպիւրեան վարժարանի մէջ:

Հանոյքով կը ծանուցանենք ամուսնական խեղաժողութիւնը ծանօթ զրող Տիգրան Դասապեանի, հիմա Տօրթէօս, Օր. Տօրթ. Օֆելիա Ներկարարեանի հետ: Սրտագին շնորհաւորութիւններ մեր համակրելի բարեկամին և խոհուն զրողին՝ իր կնքած այս զեղեցիկ ժողութեան տախիքով:

Մեր ցաւակցութիւնը կը յայտնենք Ալիւ Միհրան Էֆ. Սէֆեանի, որ զժբախտութիւնը ունեցաւ կորսնցնելու իր մայրը, Տիկին Մարիամ Սէֆեան:

Հիմնադիր Կ. Ս. Իիթի-ձեմալ: Արժանաւոր Տօրթ. Ե. ՄԱՍԻՍ: Տպագր. ձեռնագիր:

Մեր Հաշուական Հարցումին մէջ, — որուն նախորդ քիւով հա-
ղորդած էինք արդիւնը, — առաջնութիւնը շահող եւ խոստացուած վար-
ձատրութեան իրաւունքին տիրացող մրցակիցը, Ն. Ս. Տ. կ'ուղղէ մեզ
հետեւեալ նախկին, ուր նորէն չը յայտնէր իր ինքնութիւնը, հակառակ
մեր առաջարկին :

Կ. Պոլիս, 16/29 հոկտ. 1907

Ս.

Ծարաթաթերթիդ վերջին Հաշուական Մրցման մէջ միակ յա-
ջողածը ըլլալուս կը ցաւիմ, որովհետեւ եթէ երկրորդ մըն ալ
գտնուէր, սիրով իրեն պիտի փոխանցէի խոստացուած պարգեւին
իրաւունքս, չկարենալով ինքս օգտուիլ անկէ : Ծառեր սակայն
պէտք էին լուծել այդ խնդիրը, որ այն տեսակ պարգեւի մը հա-
մար պէտք եղածին չափ դժուար չէր : Հաւատացէք որ իմ մասին,
պարգեւ ընդունածի չափ եղայ, ձեր պատրաստակամութիւնը տես-
նելով, և չնորհաւորելով ձեր կատարելագոյն ուղղամիտ ընթացքը :
Կը մաղթեմ որ Մապիս իր նոր ուղղութեան մէջ յարատեւէ եւ
օրէ օր աւելի յաջողութիւն գտնէ : Ն. Ս. Տ.

Հիմա, հոս, խնդիր մը կ'զբաղեցնէ մեզ եւ շփոթութեան կը
մասնէ : Երբ Ն. Ս. Տ. չը յայտնէր որոշապէս իր ինքնութիւնը, վստա-
հօրէն չի պիտի պակսին ակնյայտներ, որոնք, ինչպէս սովոր են շատ
անգամ, տարակուսին ճշդութեանը եւ վստահականութեանը այս նախա-
կին եւ մեր Մրցումին այս անսպասելի եղին : Փարսեշու համար, ու-
րեմն, տարակոյսը անսանկերուն, առաջ քերեմք վկայութիւնը մեր աշխա-
տակիցներէն Զիֆթ-Սարաֆի, Արմենակ Ինճեանի, Արշակ Արշոյանեանի,
Միհրան Ուղարեանի, Հրանտ Նազարեանի, որոնց յատկապէս ցոյցիմք
նախկին, վճռապէս համոզելու համար քոյր քերեհաւասները : Մենք
պատրաստ էինք անեն կերպով յարգելու մեր խոստումը, բայց կը ցա-
ւիմք որ՝ անկէ օգտուելը կը հրաժարի անսարքշակի յաւելումի իրաւունք
ձեռք քերող Ն. Ս. Տ. :

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Մ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ԴԻՏԱԿԱՆ ԱՄԵՆԱՎԵՐՁԻՆ ԴՐՈՒԹԵԱՄԲ կը դարձանէ ամէն տե-
սակ ակումբի և ինտի հիւանդութիւնները, փառած ակումբները կը լեցնէ՝
առողջ ակումբներու պէս երկար տառն դարձածուելու պայմանով :

ԲՈՒՐՈՐՈՎԻՆ ՆՈՐ ՄԵԹՈՏՈՎ, նուրբ, ճաշակատար և զիմացկուն
արուեստական ակումբներ կը պատրաստէ, բնակողներին ճիշդ նման :

Հիւանդ կ'ընդունի ամէն օր իր դարձանաւան մէջ, Բերա, Մեծ
Բարձաք-Գալու, Թիւ 8 : Կարօտ հիւանդները ձրի կը դարձանէ հիւդ-
շաբթի օրերը՝ Բերաի Աղքատախնամ դարձանաւանին մէջ :

Կիրակի օրերը ժամադրութեամբ կ'ընդունի :

ՓԱԼԱԳԱՇԵԱՆ ԱՂԶԿԱՆՑ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ԼԵՁՈՒՍԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ, ԳԻՇԵՐԹՈՒԿ ԵՒ ՅԵՐԵԿԵԱՅ

Կ. Պոլիս, Գասը-Գիւղ, Մէօհիւրսար հասէսի .

Յոյ Տարեցոյցն

Մասնագէտ ուսուցիչներու և ուսուցչուհիներու ձեռամբ, տոհմային ուսումներէ և գիտական անհրաժեշտ ծանօթութիւններէ զտա, հիմնական կերպով կ'աւանդուին Հայերէն, Օսմաներէն, Ֆրանսերէն, Անգլերէն և Գերմաներէն լեզուները՝ հանդերձ խօսելալարժեքեամբ (բոսքիւ), ինչպէս նաեւ Գծագրութիւն, Տնարարութիւն, Կար ու Ձեւ, Ասեղնագործութեան դանաղան տեսակները (ձեռքով և մեքենայով), ձայնական և գործիական երաժշտութիւն, մասնաւորապէս Դաշնակ և Ջութակ: Գիշերօթիկները կը վայելեն կատարեալ սնունդ և ընտանեկան անթերի խնամք, առողջապահիկ պայմաններու մէջ: Բանակցութեան համար զիմել վարժարան՝ Տեսուչին կամ Տեսչուհիին: Մանրամասն տեղեկութիւն կարելի է ստանալ նաեւ, Գշ. Եշ. Շք. օրերը ժամը 5էն 9 զիմելով «ԳԱՐՈՒՆ» Դրատունը, Մեծ Նոր խան, վերի յարկ, թիւ 55: Աշակերտուհիներու վերամուտը տեղի պիտի ունենայ Սեպտ. 3, Բշ. օր:

Հիմնադիր-Տնօրէն

Յ. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ

ԱՓՈՍԹՈԼԻՔ ԻՆՍՅԻՅԻԹ, ԳՈՆԵԱ

(ՃԷՆՍՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ)

Վարժարանիս առաջիկայ տարեշրջանը կը սկսի Սեպտ. 13/26ին: Հաստատութիւնս կէտ նպատակի ունենալով գործնական դրագրով մը բարձր և միանգամայն գործնական կրթութիւն մը տալ ուսանողներուն մասնագէտ դասատուներու միջոցաւ, կ'աւանդէ Օսմ. Հայ. Անգլ. Ֆրանս. և Յունարէն (Յոյն աշակերտներու համար) լեզուները, ինչպէս նաեւ ընական, ընտանեկան, ուսողական, փիլիսոփայական, իրաւագիտական և վաճառականական գիտութիւնները: Մեծ խնամք կը տանի աշակերտներու բարոյայան մաքրութեան և ֆիզիքական առողջութեան: Դպրոցական նոր տարուան համար ուսուցչական մարմինին վրայ աւելցած է նաեւ համալսարանական բժիշկ մը՝ որ պիտի դասաւորէ առողջապահական և ընական գիտութիւններ և ձրիապէս պիտի դարմանէ հիւանդացող աշակերտները, եթէ գտնուին: Գիշերօթիկներու տարեթօշակն է 10 Օսմ. ոսկի, որուն կէսը վճարելի կանխիկ և բիւս կէսը Ծնունդին: Մանրամասն տեղեկութեան համար զիմել Տնօրէն Տօքթ. Ա. Յ. Հայկազեանի, Գանիա:

“ՄԱՍԻՍ”, Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պոլիսի և դաւառներու համար տարեկան 60 դրշ :

Արտասահմանի » » 14 ֆրանք :

Թղթատարութեան ծախքը մեր վրայ :

Բաժանորդները իրաւունք ունին ստանալու մեր պարգեւները,

միշտ ձրիաբար, թղթատարութեան ծախքն ալ մեր վրայ :

Մարիսի բաժանորդագրութիւնը բացարձակապէս կա՛ խիկ է :

Զնորոտարակուած ձեռագիրները ետ չեն դարձուիր :

Նամակ կտո՛մ որ և է գրութիւն ուղղել առ :

Ե Ն Ո Վ Ք Ա Ր Մ Է Ն

“ՄԱՍԻՍ”, Ի Հասցեով

Պապը Ա. Լի. Զusskui, Թիւ 38

درعليه باب عالی جاده سنده نومرو ۳۸ «ماسيس» غزته سی اداره خانه سی

Rédaction de la Revue «MASSIS»

N. 38, Avenue de la Sublime Porte

CONSTANTINOPLE

Ռ Օ Պ Է Ր Դ Գ Օ Լ Է Զ Վարժարանիս յառաջիկայ տարեշրջանը կը սկսի Սեպտ. 5/18ին : Կարգադրութիւններ եղած են վաճառականական ուսումը բաղձացուած կատարելութեամբ աւանդելու համար : Վարժարանիս մասնաւոր բժիշկը՝ ուսանողներուն առողջութեան, մարմնամարդներուն և խաղերուն, ինչպէս նաեւ վարժարանիս ընդհանուր առողջական վիճակին վրայ կը հսկէ : Մարմնամարդի նոր և զեղեցիկ չէնք մը կառուցուած է նորոգապէս, իր մէջ ունենալով մարմնամարդի ամէն տեսակ դործիքներ, վերջին գրութեանց համաձայն :

“ՄՍՍԻՍ”ի վեցամսեայ Շրջանի հաւաքածոն, որ 550 էջէ բաղկացած գրական գեղեցիկ հասոր մը կը կազմէ, կրնայ ստացուիլ Խմբագրութենէս, կանխիկ վոխարժէովը՝ 30 դր. . կազմուած 35 : Թղթատարով դրկուելիք Հասորներու համար՝ պէ՛տ է 5 դր. աւելի վճարել :

Դպրոցներու վերաբացումին՝ տղոց ձեռքը շնչիր դասագիրքեր տուած ըլլալու վստահութեամբ՝ դորձածել՝ Փայագաչեանի հրատարակութիւններէն՝ Ա.—Պոլիկներուն Թուագիտութիւնը : Բ.—Թուագիտութիւն Տարրական Դասընթացի (Ա. և Բ.Տարի) : Գ.—Պոլիկներուն Աշխարհագրութիւնը (քարտէսներով) : Դ.—Աշխարհագրութիւն Տարրական Դասընթացի : Ե.—Պոլիկներուն Երգարանը (հաւաքածոյ մանկապարտէզի երգերու) : Զ.—Այբեկարան Ընթերցարան փրանսերէն լեզուի :